ԿՈՆԴԱԿՆԵՐ.

Վեհափառ Հայրապետը անցեալ 1880 թուականի Հոկտ. Նոյեմբ. և Դեկտ. ամիսներում բարեհաճեց շնորհել հետևեալ Կոնդակները.

27 Հոկտ. թ. 462. Կոնդակ Հին Նախիջևանի վիճակի Ջահուկ գիւղացի Կարապետ քհնյ. տէր Գալստեանցի և պ. Ոսկան Գէորգեանի, Ալլահվերդի Ամիրգիւլեանի, Պետրոս Մկրտչեանի և Խանգեալդի Յովհաննիսեանցի անունով, որով հաստատում է նրանց նոյն գիւղի Հայոց Ծխական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ.

27 Հոկտ. թ. 463. Կոնդակ Սուրմալուայ գաւառի Խոշխաբաբ գիւղացի Ստեփաննոս քհնյ. տէր Ստեփաննոսեանցի և պ. Աղաջան Հայրապետեանի, Միրզայ Գասպարեանի, Աստուածատուր Մելոյեանի և Աղամ Յարութիւնեանի անունով, որով հաստատում է նրանց նոյն գիւղի Հայոց Ծխական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ.

7. Նոյեմբ. թ. 480. Կոնդակ Աղէքսանդրապոլցի Մինաս քհնյ. տէր Պետրոսեանի և պ. Արիստոդոմ Յովհաննիսեանի, Գէորգ Բաբայեանի, Յարութիւն Օհանջանեանցի, Հաջիպապ Իսպիրեանցի, Աստուածատուր Իսահակեանի, Մանուկ Խումարեանի, Ճալա գիւղացի Գէորգ Պետրոսեանի և Կարմիր—վանքեցի Խաչատուր Ենգոյեանի անունով, որով հաստատում է նրանց Անուոյ Մայր եկեղեցւոյ նորոգութեան և միաբանութեան սենեակների շինութեան հոգաբարձութեան պաշտօնի մէջ.

7 Նոյեմ. թ. 482. Կոնդակ Նուխւոյ Մեծ—Սեօգուտլուեցի Յարութիւն Հոլկոմիկեանի անունով, որով օրհնում է նորան և նորա գերդաստանը Եկեղեցւոյ գաւթում իւր արդիւնքով Ծխական դպրոց շինել յանձն առնելու համար.

14 Նոյեմ. թ. 507. Կոնդակ Նոր—Նախիջևանու և Բեսսարաբիոյ վիճակի թեմական Առաջնորդ Մակար Արքեպիսկոպոսի անունով, որի հետ ուղարկելով նեղբին գործոց նախարարի երկու գրութիւնների պատճէններ և Նոր—Նախիջևանի նորաբանալի թեմական դպրանոցի կանոնագրութեան հիմնական ծրագիրը, պատուիրում է կանխաւ ապահովել նորա տնտեսական կառավարութիւնը, պատրաստել կարևոր հրահանգներ, ընտրելտալ նոր հոգաբարձուք և տեսուչ՝ և այնպէս անշուշտ բանալ դպրանոցը՝ յառաջակայ 1881—82 կրթական շրջանում.

2 Դեկտ. թ. 535. Կոնդակ Վարդան քհնյ. Ումրշատեանի, Պ. Սարիբէգ Հերթեցեանցի, Գալուստ Սահակեանի, Յարութիւն Յակոբեանի և Պողոս Վաթոյեանի անունով, որով հաստատում է նրանց Աղէքսանդրապոլու Մահմուտճուկ գիւղի Հայոց Ծխական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ.

5 Դեկտ. թ. 536. Կոնդակ պ. Յովհաննէս Զիթախեանցի, իշխան Կոստանդին Բէհբութեանցի, իշխան Նապոլէոն Ամատունու, Պղատոն Գուրգենբէկեանցի, Դաւիթ Ղորղանեանցի, Արզար Յովհաննիսեանցի,

Գէորգ Եւանգուլեանցի, Գէորգ Ալիմեանցի, Աւետիք Բարայեանցի, Մարկիանոս Ռօտինեանցի, Պօղոս Ղամբարեանցի և Յովհաննէս Զիգիանեանցի անունով, որով հաստատում է նորանց Տփխիսու Ներսիսեան Ազգային—Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ։

16 Դեկտ. թ. 551. Կոնդակ օրհնութեան և ի պատասխանի գրութեան Ռումանիոյ Գօկշան քաղաքի Հայ ժողովրդեան Հոգ. Տեսուչ Գէորգ վարդապետի անունով, որով գովում է յիշեալ վարդապետի աշխատութիւնները իրան յանձնուած ժողովրդեան շինութեան և պայծառութեան՝ ինչպէս նաև օրիորդաց դպրոց բանալոյն համար, նոյնպէս օրհնում է նորան, ժողովուրդին ու նորաբաց օրիորդական դպրոցի տաներին։

19 Դեկտ. թ. 554. Կոնդակ օրհնութեան Տփխիսեցի Մովսէս Վարդանեանի անունով Մայր Աթոռոյս տպարանում տասն և երկու տարի ծառայութիւն անելու համար։

30 Դեկտ. թ. 565. Կոնդակ, պ. Պօղոս Կիրակոսեանի, Գրիգոր Բալոյեանի, Աստուածատուր Պօղոսեանի, Գրիգոր Մինասեանցի և Գրիգոր Խաչատրեանցի անունով, որով հաստատում է նորանց Աղէքսանդրապօլու Աղքիլիսէ գիւղի Հայոց Ծխական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 5ն Նոյեմբ. 1880 ամի, Զպսակն Կիւնէյ ճարտարեցի Յովհաննիսի Սուլէյմանեան ընդ Սարիամայ Ասրիեան, կատարեալն ապօրինաւորապէս յանՁոյլատրելի եկեղեցական կանոնօք աստիճանի համարել անվաւեր։ ԶԽաչատուր քահանայն Տ. Եսայեան Խնուշէնցի, որ խարդաւանօք տուեալ է կատարել զայն ապօրինի պսակ ընդ ձեռն Մարգարէ քահանայի՝ ջանալով դիտութեամբ ծածկել զայն չհաստատութիւն, դադարեցուցանել խսպառ ի քահանայագործութենէն եւ անորոշ ժամանակաւ առաքել յապաշխարութիւն ի վանս Գանձասարու։ Իսկ զպսակադիր Մարգարէ քահանայն, որ պարտէր նախ քան զպսակադրութիւնն վերահասու լինել ամենայն հանգամանաց եւ ոչ շտանալ միայն պատրուակեալ զրութեամբ Խաչատուր քահանայի, արկանել ընդ երեքամսեայ ապաշխարանօք ի դուռն Եկեղեցւոյն։

Ի 14 Նոյեմբ. 1880 ամի. Զգործակալն Սագարիջոյի զՍողոմոն քահանայն Էրիտեանց, որ առանց նախընթաց գիտութեան եւ թոյլտուութեան Հոգեւոր իշխանութեան վստահացեալ է կատարել զպսակ բնակչի Մանաւ գեղջ վիճակին Վրաստանի Գէորգայ Սումրուքեանց ընդ Եղիսաբէթի Ագուլեանց ի կարծիրական չհաստական աստիճանի, արձակել ի պաշտօնէ գործակալութեան, դադարեցուցանել ի քահանայագործութենէ զամս երիս եւ զպսակն համարել անվաւէր։

Ի 14 Նոյեմբ. 1880 ամի. Ըստ նախընթաց հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց գկարապետ վարդապետն Այվազեանց արձակել ի պաշտօնէ կրօնուսուցչութեան եւ ուսուցչութեան Հայոց լեզուի յԱրքունի գիմնազիային Երեւանայ եւ ըստ խնդրանաց թեմական Առաջնորդին Հայոց Ղարաբաղու Անդրէաս Ար-